ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՆՏԵՐՆԵՏ ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N << ԴԱՀԿ-ՇՀԾՁԲ-15/1-17/1>>

ք. Երևան **<< 14>> ապրիլի 2017թ.**

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ԴԱՀԿ ապահովող ծառայությունն, ի դեմս գլխավոր ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար **Արմեն Հարությունյանի** (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, <ՎԵԲ> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն **Ալբերտ Տոնեյանի** (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«ինտերնետ կապի ծառայությունների»** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը ընդունվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության **2(երկու)** օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը **2(երկու)** (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10(տաս) աշխատանքօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **19500000 (տասնինը միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան **25.12.2017թ.**:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը, բայց ոչ ուշ քան **25.12.2017թ.**:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է **4(չորս)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ապահովող ծառայություն	**<ՎԵԲ> ՍՊԸ**
Ք. Երևան, Հալաբյան 41/ա	**ՀՀ, Երևան, Կոմիտաս 60 թիվ 2**
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	**Կոնվերս Բանկ ՓԲԸ**
Հ/Հ 900013288023	**Հ/Հ 1930000492570100**
ՀՎՀՀ 01223338	**ՀՎՀՀ 00027623**
	Հեռ.՝ +37460 460222
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
<< 14>> ապրիլի 2017թ. կնքված
N << ԴԱՀԿ-ՇՀԾՁԲ-15/1-17/1 >> գնման պայմանագրի

"

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Անվանում	Նկարագրությունը
1.	**Ինտերնետ կապի տրամադրման ծառայություններ**	Ծառայությունը պետք է տրամադրվի «OSI Layer 2» մակարդակում, ինչը հնարավորություն կընձեռի ստեղծել ժամանակակից էլեկտրոնային կառավարման վիրտուալ մասնավոր ցանց, որն ամբողջովին առանձնացված կլինի արտաքին աշխարհից և պաշտպանված կլինի արտաքին մուտքերից կամ ներխուժումներից՝ լինելով ներփակված զուտ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության ներքին ցանցային ենթակառուցվածքում: **Առանձնացված կապուղի՝** Օպտիկամանրաթելային կապուղու ապահովում երկու հիմնական ուղղություններով կրկնակի լարանցումներով Հավելված 1-ում նշված բոլոր հասցներեի համար, ինչպես նաև յուր. հասցեում առանձին 20 VLAN-ի տրամադրում, համապատասխան սարքավորումների տեղադրում: □ Ապահովել «QinQ, STP, Ethernet over MPLS» օգտագործման հնարավորությունը ցանկացած կետում, **Առանձնացված կապուղու հատկանիշներ՝** Ապահովել ցանկացած կետում ցանկացած VLAN Id օգտագործման հնարավորությունը, ինչպես նաև VLAN Id-ների կիրառման հնարավորություն, օգտագործվող ծառայությունների (հեռախոսակապ, ներքին ցանց, առանձնացված սերվերներ և այլն) պլանավորվող յուրաքանչյուր կետում: Ապահովել ուղղորդում (routing) վերոնշյալ Layer2 խմբերի միջև: Հավելված 1-ում նշված է դեպի վերոգրյալ հասցեներ օպտիկամանրաթելային կապուղու տրամադրում և նվազագույն արագությունների թողունակությունների ապահովում: □ Սիմետրիկ արագությամբ երաշխավորված (CIR) առանց տրաֆիկի որևէ սահմանափակման ինտերնետ հասանելիություն: Անհրաժեշտ վերջնասարքերի տեղադրում միացման յուրաքանչյուր կետերում, օպտիկամանրաթելային կապուղիների սպասարկում, բաժանորդների սպասարկման ծառայություն (Help Desk), ինչպես նաև իրականացնի ծառայության վերահսկում (մոնիթորինգ)՝ 24 ժամ և 7 օր ռեժիմով: □ «latency» ոչ ավել քան 5 ms □ ապահովել ցանցային ուղղորդում բազմաթիվ պահուստային ճանապարհներով և վերականգնման ունակությամբ ("routing with multiple redundancy paths and resiliency") հիմնական կետի Հավելված 1-ի որևէ կետում կապը չպետք է խափանվի տարեկան ոչ ավելի, քան 4 անգամ: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 60 րոպեից ավելի ժամկետով: Մեկ ամսվա ընթացքում հավելված 1 -ի որևէ կետում կապը

		չպետք է խափանվի (բացակայի) ոչ ավելի, քան 120 րոպե ժամանակով, իսկ հավելված 2-ի որևէ կետում՝ 240 րոպե ժամանակով: Սույն դրույթի իմաստով կապի խափանման (բացակայության) ժամանակը հաշվարկվում է որպես մեկ ամսվա ընթացքում կորպորատիվ ցանցի տվյալ կետում կապի բոլոր խափանումների (բացակայությունների) ժամկետների հանրագումար: Կապի կորստի դեպքում՝ անհապաղ և կապի վերականգման աշխանքների վերաբերյալ՝ պարբերաբար տեղեկացնել պատվիրատուին՝ հեռախոսով և էլեկտրոնային փոստով Dynamic routing» ԻԾՄ-ների, հիմանական և պահուստային հանգույցների միջև Օպերատորը պետք է երաշխավորի Շրջանցի Տևողություն(Round Trip Time) հետևյալ ամսական միջին արժեքները: Մոտակա միջազգային երթուղիչը՝ 30 մվրկ, Եվրոպա 150 մվրկ, Ռուսաստան, ԱՊՀ 70 մվրկ, ԱՄՆ 260 մվրկ, Վաշինգտոն 180 մվրկ, հանգույցի քանակ 16, Ստեփանակերտ 5վրկ, հանգույցի քանակ 8, Այլ երկրներ 360 մվրկ:Օպերատորը պետք է ապահովի Փաթեթների կորստի տոկոսաչափը առավելագույնը 0,5% **Ինտերնետ կապ՝** Օպտիկամարաթելային կապուղու ապահովում դեպի Հավելված 1-ի Հալաբյան 41 հասցեում – 150 մբ/վ, իսկ մնացած հասցներում առնվազն 10mb/s, արագությամբ, ինչպես նաև x.x.x.0/24 (real ip) հասցեների տիրույթի տրամադրում, ինչպես նաև պահուստային Ռադիոռելերային գծի տրամադրում փակ եթերի շրջանակներում:

<u>Հավելված 1-ում ներկայացված են ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության մարզային բաժիններն ու բաժանմունքները, որտեղ Կատարողի կողմից պետք է ապահովվեն տեխբնութագրով նախատեսված ծառայությունների մատուցումը և ապահովվեն նշված ժամկետներն ու ինտերնետ կապի արագությունը:</u>

<u>Հավելված 1</u>

Հ/Հ	Անվանումը	Հասցեն	Օպտիկ. կապ. ծառ. տրամ. սկզբնաժամկետ	Արագություն մբ/վ
1.	Երևան	Հալաբյան 41ա	01.05.2017	600
2.	Երևան	Հալաբյան 41ա	01.05.2017	200
3.	Երևան	Հալաբյան 41ա	01.05.2017	50
4.	Երևան	Հալաբյան 41ա	01.05.2017	50
5.	Գյումրի	Անկախության 7	01.05.2017	200

6.	Գյումրի	Անկախության 7	01.05.2017	50
7.	Վանաձոր	Գ.Նժդեհի 16	01.05.2017	50
8.	Ստեփանավան	Միլիոնի 11	01.05.2017	50
9.	Ալավերդի	Երևանյան 8	01.05.2017	50
10.	Էջմիածին	Կամո 15	01.05.2017	50
11.	Հրազդան	Մ/շ փոստ 2	01.05.2017	50
12.	Սևան	Նաիրյան 1-ին նրբ.13շ.	01.05.2017	50
13.	Դիլիջան	Կալինինի 233	01.05.2017	50
14.	Աշտարակ	Էջմիածնի խճ.65	01.05.2017	50
15.	Արմավիր	Սայաթ -Նովա 109ա	01.05.2017	50
16.	Աբովյան	Քաղաքապետարանի վարչական շենք	01.05.2017	50
17.	Արտաշատ	Լուսինյան 9	01.05.2017	50
18.	Վեդի	Արարատյան 55	01.05.2017	50
19.	Մասիս	3-րդ փող. 28 տուն	01.05.2017	50
20.	Եղեգնաձոր	Սևակի 9	01.05.2017	50
21.	Կապան	Երկաթուղայինների 4	01.05.2017	50
22.	Գորիս	Մաշտոցի 3	01.05.2017	50
23.	Սիսիան	Ադամյան 35	01.05.2017	50
24.	Նոյեմբերյան	Երևանյան 4	01.05.2017	50
25.	Գավառ	Ազատության 15/2	01.05.2017	50
26.	Մարտունի	Գարեգին Նժդեհ 7	01.05.2017	50
27.	Իջևան	Մելիքբեկյան 5	01.05.2017	50
28.	Եղվարդ	Երևանյան 1	01.05.2017	50
29.	Բերդ	Լ. Բեկի 5	01.05.2017	50
30.	Թալին	Խանջյան 13	01.05.2017	50

31.	Արթիկ	Բաղրամյան 40	01.05.2017	50
32.	գ. Մյասնիկյան	Մյասնիկյան 4	01.05.2017	50
33.	Ճամբարակ	Նժդեհի 105	01.05.2017	50
34.	Մեղրի	Փարամազի 7/2	01.05.2017	50

** Իրականացվում է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության կողմից տրամադրվող օպտիկամանրաթելային կապուղու և սարքավորումների սպասարկում*
*** Կարող է իրականացվել նաև օպտիկամանրաթելային կապի միջոցներով*
****Վերջնական ամսաթվերը ենթական են ճշգրտման՝ կախված շենքերի շահագործման հանձնելու ամսաթվից, նոր հասցեում կապի տրամադրումից հետո նախկին հասցեում կապը դադարեցվում է*
***** Պետք է ապահովվի իրարից անկախ, երկու տարբեր ճանապարհներով քաշված կապուղիների միջոցով*
****** Ծառայության մատուցումը իրականացվում է 2017 թվականի մայիսի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 20-ը:*
******* առանձնացնել լարային հեռահաղորդակցական ցանցով համացանցի տվյալների փոխանցման տրաֆիկը :*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ապահովող ծառայություն
Ք. Երևան, Հալաբյան 41/ա
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900013288023
ՀՎՀՀ 01223338

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<ՎԵԲ> ՍՊԸ
ՀՀ, Երևան, Կոմիտաս 60 թիվ 2
Կոնվերս Բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930000492570100
ՀՎՀՀ 00027623
Հեռ.՝ +37460 460222

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
<< 14>> ապրիլի 2017թ. կնքված
N << ԴԱՀԿ-ՇՀԾՁԲ-15/1-17/1 >> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության 2017թ. արտաբյուջեի միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	**Ինտերնետ կապի տրամադրման ծառայություններ**	-	-	-			2437500	4875000	7312500	9750000	12187500	14625000	19500000	**19500000 (տասնինը միլիոն հինգ հարյուր հազար)**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով՝ ՀՀ դրամով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ապահովող ծառայություն
Ք. Երևան, Հալաբյան 41/ա
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900013288023
ՀՎՀՀ 01223338

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
<ՎԵԲ> ՍՊԸ
ՀՀ, Երևան, Կոմիտաս 60 թիվ 2
Կոնվերս Բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930000492570100
ՀՎՀՀ 00027623
Հեռ.՝ +37460 460222

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
<< 14>> ապրիլի 2017թ. կնքված
N << ԴԱՀԿ-ՇՀԾՁԲ-15/1-17/1 >> գնման պայմանագրի

Պատվիրատու

ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ապահովող ծառայություն
Ք. Երևան, Հալաբյան 41/ա
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900013288023
ՀՎՀՀ 01223338

Պայմանագրի կողմ

<ՎԵԲ> ՍՊԸ
ՀՀ, Երևան, Կոմիտաս 60 թիվ 2
Կոնվերս Բանկ ՓԲԸ
Հ/Հ 1930000492570100
ՀՎՀՀ 00027623
Հեռ.՝ +37460 460222

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ պետության կարիքների համար ինտերնետ կապի ծառայությունների մատուցում
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ **«14» «ապրիլի» 2017թ.**
Պայմանագրի համարը՝ **ԴԱՀԿ-ՇՀԾՁԲ-15/1-17/1**

Պատվիրատուն՝ ի դեմս Արմեն Հարությունյանի և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
<< 14>> ապրիլի 2017թ. կնքված
N << ԴԱՀԿ-ՇՀԾՁԲ-15/1-17/1 >> գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ **Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության** աշխատակազմի(այսուհետ՝ Պատվիրատու) և **«ՎԵԲ» ՍՊԸ-ի** (այսուհետ՝ Կատարող) միջև 2017թ. ապրիլի «14» -ին կնքված << ԴԱՀԿ-ՇՀԾՁԲ-15/1-17/1>> գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն